

ընտանիքը Գաստիարակումբան բուն տեղը, մեծապատիւ հանդիսականք, ընտանիքն է եղել և միշտ պիտի լինի նոյնը Ի զուր և անօգուտ կըլինէին դպրոցի ջանքերը՝ եթէ ընտանիքը նորան չօգնէր և չստանդորդէր։ Օրօրոցէն մինչև 7—8 տարեկան զառնալը, զիտէք լծէ երեխան ինչ մեծ գիտութիւն է ստանում։ Երանի՛ այն երեխաներուն, որոց այդ հասակի ժամանակամիջոցի մը ուսածները գեղեցիկ և բարի են։ Այն այն երեխաներուն, որոց ուսածները սոցա հակառակն են։ Եւ այս հասակի մը երեխայի գաստիարակը ու՛ր է — եթէ ոչ ընտանիքը։ 2է՛ որ դպրոցն էլ ընտանիքի օգնականն է, այսինքն դպրոցը պէտք է անի այն, ինչ որ ընտանիքը պիտի անէր։ Բայց որովհետև ամեն ընտանիք չունի այն բոլոր պայմանները, որ մի օրինաւոր դպրոց պէտք է ունենայ, միայն այդ պատճառաւ կուղարկէիւր զաւակը դպրոց։ Բայց դպրոց ուղարկելով, նա, այսինքն ընտանիքը չէ պրծնում իւր պարտականութիւններէն։ Նա լռելայն խոստանում է դպրոցին ձեռք ձեռքի տուած, իւր Աստուածապաշտանը, մարդավայել և բնական անհրաժեշտ պարտականութիւնները կատարելու։ Թող մէկը ցոյց տար ինձ յառաջդիմութիւն այն տեղ, ուր տեղ որ դպրոցն այլ և ընտանիքն այլ բան կուսուցանէ մանուկներուն։ Եթէ ճշմարիտ է, որ վատ հանգամանքներէն բարի պտուղներ չենք կարող քաղել, ուրեմն կը մնայ մեզ, խոնարհաբար առաջարկել՝ Թարգոյապատիւ Հայ-ընտանիքներուն, որ չցոյց տան երեխային այն, ինչ որ կը դայթակղեցնէ նորան, չլսել տալ երեխային այն, ինչ որ մարդավայել չէ։ Միով բանիւ լինեն հիմքը դպրոցի և օգնականը դպրոցի։ Այլեմն կրնա որ դպրոցը և ընտանիքը և միմեկմայն ողջ հասարակութիւնը իրենց պարտականութիւնները կը կատարեն դաստիարակական մտքը, այն ժամանակը կարող ենք վստահաբար ասել, որ մեր տուած ուսումը և դաստիարակութիւնը բարի և գեղեցիկ պտուղներ կը տային մեզ։ Տար Աստուած ուրեմն, որ մեր այս գեղեցիկ ցանկութիւնները յօգուտ տեղւոյս բարեպաշտօն հասարակութեան և համայն ազգիս ի փառս Աստուծոյ և ի պատիւ անմահ յիշատակին իշխան Ասորոսմանի երկայնարազուկ Արդու-թեանցի դպրոցիս հիմնադրին՝ իրագործուին։

Արժանապատիւ Հայր և մեծապատիւ Հանդիսականք, խօսքս չվերջացրած, լծոյ տուէք աղաչեմ, անկեղծաբար մաղթել առ Արարիչն, որ շնորհէ մեր Բնական Ապսիւր, Աղէքսանդր Բին և նորա ժառանգներուն երկար կեանք և զթաժ սիրտ, որոյ հովանաւորութեան տակ կարողանայինք մենք մեր մարդկային պարտականութիւնները ազատօրէն կատարել։ Մաղթունք նոյնպէս ամենայն Հայոց Աւհարառ Վաթոյկոսին, Գեորգ Ղին՝ երկար կեանք և առողջ միտք, որ մեր մատաղ մանուկներու կրթութեան և դաստիարակութեան քաջ տնօրէն հանդիսանալով, ար-

դարացնէ Հայ ազգի բարի ակնկալութիւնները։ Ի վերջոյ, լծող վեր առաքենք ամենքս մեր անկեղծ բարեմաղթութիւնները առ Խնամակալ Աստուածն ամենայն որոց և էակաց, որ երկար կեանք շնորհէ ազնուափայլ իշխանուհի Տիկին Արփայ երկայնարազուկ Արդու-թեանցին, որոյ հանգուցեալ իշխան Ամուսնոյնուիրաքաշխութեան շնորհիւն է՝ որ տեղւոյս բարեպաշտօն հասարակութեան զաւակները պիտի գիտութեան գեղեցիկ պտուղները վայելն։

Ս. Բէշ - Կապալեանց

1871 թ. Դեկտեմբեր 18

ՅԱՆԿԱՆԵՐԻՆ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԷԱՅԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՏԻՆԱՅԻ

ԵՒ ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻ ՊԱՐՈՆԱՅԻ

Մէկ չափազանց ուրախութեան, մէկ էլ չափազանց տխրութեան ժամանակ սովորական է, որ մարդուս լեզուն չէ կարող իւր սրտի զգացածները արտայայտել խօսքով։ Իմ ուրախութեան զգացումը չափազանց է այսօր, որի լեզուով բացատրելուն անկարող եմ։ Վասն զի ամենակարեւոր և վաղուց անհրաժեշտ համարուած, Օրիորդական Գրքոցը, վերջապէս տեսնում եմ իրագործուած և Աղէքսանդրապոլում՝ Արժանաշիշտակ սկզբնապատճառի անմահ հոգուն հանդիստ ու խաղաղութիւն և նորա գերեզմանին փառք։

Չեղ էլ Պատուարժան Տիկինք և Թարգոյապատիւ Պարոնայք, նուիրում եմ Փրանսիացի Վիկտոր Հիւկոյ լատնատեղծի մի քանի հանձարաւոր խօսքերը, քաղած նորա մի ճառից, որովհետև նորա խօսքերի մէջ համեմատութիւն եմ գտնում այսօրուայ հանդիսի նկատմամբ իմ Չեղ ուրիշի զգացումներս։ Ասում է. «մանկանց օգնութիւնը ազատարարութեան մի գործի կատարումն է։ Մանկանց ազատութիւնը գոստիարակութեան և առողջութեան մէջ է։ Օգնելը ուրեմն մանկանց, նոցա տկար և փոքր մարմինները զարգացնելով, նոցա գողտր և աճուն միտքը լուսաւորելով, Աղէքսանդր ողորմութիւն տալու միջոցաւ, օգնութիւնը առ ժամանակակա մի դարման է։ Գծադրուած ճշմարիտ օգնութիւն տուած լինելու համար, լծուառութիւնն ու աղքատութիւնը ընթացիկ առնելու է։ Մենք նորան էլ պիտի հասնինք։ Այլեմն յառաջդիմելը մանկանց օգնելով ամենայն միջոցով, բարեք մտնողով և բարեք ուսմամբ։ Մանկուկը մեր գլխաւոր հոգածութեան առարկան պէտք է լինի։ Ինչո՞ւ. վասն զի՝ զիտէք՝ լծէ ինչ է նոցա ճշմարիտ անունը։ Մանկուկը ապագայ ասիւ է։ Մանկանց համար ինչ որ անենք, ապագան նորա հարկաւորապատիւ պէտք

է հատուցանէ: Նոցա մատաղ միտքը ապագայի հունձքն է: Մանուկները զարգացնելով, ապագան ենթ զարգացնում: Զարգացնել, ինչ խորախորհուրդ բառ, թէ որ մանուկն առողջ լինի, ապագան էլ առողջ է լինելու: Թէ որ մանուկը առաքինի և պատուաւոր լինի, ապագան էլ փառաւոր է լինելու: Մանկութիւնը լուսաւորենք դաստիարակութեամբ, որպէս զի ապագայ դարու արշալոյսը ճառագայթարձակ ենէ: Մանկութեան ջահն ապագայի արեւն է:,,

Օւրբի-հէ Տ. Մէլքիշէան գէ-լը-մէնյ
150 Յոնիւրի 1874 թ.
Ալէքանդրապոլիս:

Դ. ՏԱՐԵԴԱՐԶ

ՕՏՄԱՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Ի 23-ն ամսոյս՝ յաւուր Կիւրակէի, արժանաւոր հանդիսիւ տօնեցաւ Դ. Տարեդարձ Օծման Ս. Կաթողիկոսի Տ. Տ. Գէորգեայ Գ. ի Գահակալութիւն Երարատեան Մայր Եկեղեցոյս և ի Հայրապետութիւն ամենայն Հայոց, որ թէև պատահեալ էր ձշտիւ ի 21-ն Մայիսի:

Օկնի առաւօտեան ժամերգութեան՝ նախ քան զճաշու ժամն՝ ի միջոցի մաղթանաց և ի սեղանատան կարդացուեցան ճառք, զորս արժան կը համարիմք յետագայ թուով հաղորդել ազգայնոցս:

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. Է. Զ. Մ. Ի. Ա. Ծ. Ն. Ի.

ԵՒ ՕՏՈՒՄՆ

Փառաւոր հանդիսիւ և հոգեպարար հրճուանօք կատարուեցաւ Տօնն Կաթողիկէ Եկեղեցւոյ մերոյ սրբոյ Եջմիածնի 30-ն ամսոյս:

Ի նոյն աւուր մեծաւ հանդիսիւ օծուեցաւ նորաշէն պահարաններէն հարաւայինը յանուն սրբոյն Գէորգայ՝ ինչպէս նաև նորին սեղանոյն պատկերը:

Ի սեղանատան կարդացեալ ճառը յաջորդ թուով կ'հրատարակեմք:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԷ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ ՄԻ

Ամսոյս 3ին չորեքշաբթի երեկոյն արտաքոյ կարգի ուրախալի շարժում մի կ'ընդունուէր ի թաղոն Հայոց, Ալք և կանայք, ծերք և տղայք ոտքի վերայ էին, մէկ տունէն միւս տունը կերթային, պատուհանները լն էին շնորհալի կերպիւ հագուած օրիորդներէ և տիկիներէ, որոց Հայկական համեստ գեղեցկութիւնը և զմայելի քմիծաղը՝ անցնող զարձող երիտասարդայ լիրալիւր ուշադրութիւնը կը գրաւէին: Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն դուռը միտենինքնով զարդարուած էր և անոր առջև, ինչպէս նաև նոյն թաղին մէջ տեղ տեղ լուսավառ ջահեր դրուած էին. իսկ եկեղեցւոյն տաճարը Զատիկ և Ծննդեան տօնախմբութեանց աւուրց նման, արծաթեղէն գեղեցիկ անօթներով և կանթեղներով զարդարուած էին, բազմաթիւ մամեր կրփաւէին, եկեղեցւոյն դուռը և ներսը ժողովդով, և վերնատունը տիկիներով ու օրիորդներով լեցուն էին:

Ինչ էր այս տօնախմբութեան և ժողովդական ուրախալի շարժման պատճառը:

Մոսկուայի մեծահարուստ Հայ վաճառական աղա Յօհաննէս Անանօֆ որդի՝ մեծա. աղա Ստեփան Անանօֆ անխաւարտ հարսանիքը կրկատարուէր, նոյն գիշերը քաղաքիս Անգլոյ հիւպատոսարանին ճառջին թարգման մեծա. Լուկաս աղային նորատի չքնաղ զտերը հետ կամուսնանար:

Կէս գիշերը երկու ժամ մնացած, Էքիզեան մեծապատիւ Մկրտիչ աղային ընդարձակ տունէն, ուր կրկատարուէր հարսանիքը, փառաւոր հանդիսիւ և չքեղ կատաց մէջ նստած կ'ան հարսն ու փեսան՝ ընկերութեամբ բազմաթիւ հրաւիրելոց՝ որոնք ևս կ'աղբով էին:

Եւ երբ հասան եկեղեցւոյն դուռը, զարդարուն շապիկներ հագած երգեցիկ մանկուկներ քաղցրաձայն հոգեւոր երգերով զիմաւորեցին զանոնք և առաջնորդեցին ի տաճարն: Ուր ամուսնութեան խորհուրդը փառաւորապէս կատարուելով՝ նորապսակ ամուսինքը միւսնոյն չքեղ հանդիսիւ վերադարձան Էքիզեանց Մկրտիչ աղային տունը. և այնտեղ մեծ պարահանդէս մի եղաւ, ու մինչև առաւօտ լողող հրաւիրեալները պարեցին, մեծարուեցան, և Շանրանիայի գինի խմեցին ի կենդանութիւն մեծա. աղա Ստեփան Անանօֆի և իւր շնորհալի տիկնոջը՝ որոց երկուքն ալ մեծապէս կրփալէին իրենց բարեկրթութեանի: ու աղնուական վարմունքով, Բանգի աղա Ստեփան Անանօֆը՝ որ իւր դաստիարակութիւնը Փայիզի